«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝ Հայոց պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Արմենուհի Խաչյան

Ուսումնական հաստատություն՝ Արամայիս Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……..……..……..…3

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գլուխ 1

1.1 Արժեքային համակարգ հասկացությունը հոգեբանության մեջ և դրանց կապը դաստիարակության ձևերի հետ…..……..……..….5

1.2 Անձի արժեհամակարգի ձևավորման աշխարհայացքային նախադրյալները……....8

Գլուխ 2 Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատություններում

2.1 Դպրոցահասակների արժեհամակարգի ձևավորման ուղղիները և մեթոդները……..……..……10

2. 2 Արժեհամակարգի ձևավորումը ավագ դպրոցահասակների շրջանում հայոց պատմություն առարկայի դասավանդման ընթացքում…….. ……..……11

Առաջարկություններ……12

Եզրակացություն……..……17

Օգտագործված գրականության ցանկ……....18

Ներածություն

Բարոյական ուժն է գոտեպնդում փոքր ժողովուրդներին ու բանակներին անհավասար կռվում. նա է դեպի հաջողություն ու հաղթանակ առաջնորդում թվապես թույլերին՝ մեծ, մեծամեծ հակառակորդների դեմ:

Գ. Նժդեհ

<u>Արդիականությունը</u>: Հասարակության սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում տեղի փոփոխությունները որոշիչ որոշիչ ազդեցություն ենմ ունենում դպրոցահասկաների բարոյական գիտակցության, արժեքային կողմնորոշման, աշխարհայացքի ձևավորման և կյանքի նպատակների ընտրության վրա: Դաստիարակության հիմնական նպատակը՝ բազմակողմանի ու ներդաշնակ անձնաորության ձևավորումը, ով պետք է կարողանա նաև դիմակայել շրջապատի բացասական ազդեցություններին վստահորեն տեր կանգնել իր ազգային արժեքներին, ձեռքբերումներին,անկախությանն: Ուսուցման գործընթացը իրականացնելիս խիստ կարևորվում են սովորողների բարոյահոգևոր նկարագրի, արժեքային համակարգի, ազգային և սոցիալ-մշակութային զարգացման հարցերը և մարդասիրական դաստիարակության պահանջը, որոնք իրականացվում են բարոյահոգևար դաստիարակության ընթացքում: Յուրաքանչյուր հասարակություն, սոցիալական խումբ, հասարակական խմբավորում ստեղծում է իրեն հատուկ ընդհանուր և յուրահատուկ արժեքային համակարգեր և վարքականոններ, որոնք արտահայտում են նրանցում գերակայող հետաքրքրությունները և նպատակները: Այդ հասարակությանը պատկանող մարդը ընդունում է դրանք որպես իր վարքի չափանիշ:

<u>Հետազոտության նպատակը</u> *՝բացահայտել ավագ դպրոցականների հոգևոր դաստիարակության առանձնահատկությունները, ստեղծել մանկավարժահոգեբանական պայմաններ,որը կնպաստի սովորողների արժեհամակարգի ձևավորմանը:*

Հետազոտության խնդիրները.

- *Ուսումնասիրել արժեհամակարգի ձևավորման ուղղիների և դրանց կապը դաստիարակության ձևերի միջև:*
- *Մշակել ուսումնական նախագիծ, որի արդյունքում սովորողների մոտ կձևավորվի ազգային արժեհամակարգ, հաշվի առնելով նրանց տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները:*

Հետազոտության մեթոդները.

- *Տեսական գրականության վերլուծություն, փորձարարական մեթոդներ՝դիտումներ, հարցումներ,զրույցներ:*

Հետազոտության տեսական նշանակությունը՝

- *արժեհամակարգի և գիտակցության հարաբերակացություն, ինքնաճանաչողական, իմացաբանական տեսություններ:*
- *մանկավարժության տեսության և գործնական մանկավարժության արդի ձեռքբերումները:*
- *բարոյահոգևոր դաստիարակություն, բարոյագիտություն:*

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գլուխ 1

1.1 Արժեքային համակարգ հասկացությունը հոգեբանության մեջ և դրանց կապը դաստիարակության ձևերի հետ

Հոգեբանական գիտության բնագավառում արժեքների մեկնաբանության բազմազանության մեջ առավել տարածում ունի այն մոտեցումը, որում արժեքը դիտարկվում է որպես հասարակության կենսագործունեության որոշակի արդյունք: Այդ մոտեցումը ցայտունորեն արտահայտված է փիլիսոփաների և սոցիոլոգների գիտական աշխատություններում: Հոգեբանական գիտության բնագավառում անձնային արժեքների հասկացման գերակայող մոտեցումներից մեկը այն է, որ արժեքը դիտվում է որպես պահանջմունքներին և շարժառիթներին համարժեք հասկացություն: Մասնավորապես՝ անձնային արժեքները և իմաստը կենտրոնական տեղ են զբաղեցնում հումանիստական հոգեբանության մեջ: Անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը ընդունված է դիտարկել հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափությունների համատեքստում: Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ: Վերլուծելով անձի իմաստային ոլորտի ձևավորման և զարգացման խնդիրը՝ Ա. Սեռին պնդում է, որ այդ գործընթացները արտացոլում են տարիքային և անձնային զարգացման ընդհանուր օրինաչափությունները: Դ. Լեոնտևը նշում է, որ յուրաքանչյուր անձի զարգացման գործընթաց բնութագրվում է սոցիալական հանրության արժեքների և դրանց փոխակերպումների, այսինքն՝ անձնային արժեքների կերպափոխմամբ [Леонтев Д. А., Развитие личностных ценностей в общественном контексте, Вестник Московского Университета. Сер. 14. Психология. 1997. №1. сс. 20-27.] :Արժեքային համակարգի ձևավորումն ընթանում է դաստիարակության և կրթության ընթացքում սոցիալական փորձի յուրացման միջոցով: Անձնային արժեքները ձևավորվում են սոցիալականացման ամբողջ ընթացքում [Журавлева Н. А., Психология социальных изменений: ценностный подход. - М.: –зд-во «Институт психологии РАН», 2013. – 524 с.] .

Գ. Մ. Անդրեևան, որպես արժեքների անհատական համակարգի ձևավորման միջավայրային գործոններ, առանձնացնում է ընտանիքը, դպրոցը, աշխատանքային կոլեկտիվը, որոնք «սոցիալական փորձի միջնորդ» են, որոնցում անձը

հաղորդակցվում է նորմերի և արժեքների համակարգի հետ [Андреева Г. М., Психология социального познания. М.: АспектПресс, 2000, 288 с.] :

Ըստ դաստիարակության բովանդակության առանձնացնում են դաստիարակության հետևյալ տեսակները.

- մտավոր
- աշխատանքային
- ֆիզիկական
- բարոյական
- հոգեբանաբարոյական
- գեղագիտական
- իրավական
- հայրենասիրական
- սեռային և սեռական
- տնտեսագիտական
- բնապահպանական (էկոլոգիական)
- և այլն

Սովորողի արժեհամակարգի ձևավորման ուղղիներից մեկը *գեղագիտական դաստիարակության* իրականացնում է: Գեղեցիկի և բարու փոխհարաբերությունները և համապատասխան արժեքների ձևավորման խնդիրները եղել են բոլոր ժամանակների հետազոտողների ուշադրության կենտրոնում: Որոշ հետազոտողներ հակված են գեղագիտական դաստիարակությունը ներառել բարոյական դաստիարակության մեջ: Հայտնվում է նաև տեսակետ, ըստ որի գեղեցիկը ծառայում է որպես բարոյական դաստիարակվածության մակարդակ: Գեղագիտական դաստիարակության շնորհիվ հնարավոր է դառնում նաև անձի հոգևոր աշխարհի գեղագիտական, բարոյական և ինտելեկտուալ բաղադրիչների միջև լիակատար ներդաշնակության հաստատումը:

Գեղագիտական դաստիարակությունը բնության և հասարակության ճանաչողության միջոցներից մեկն է: Նրա նպատակը գեղագիտական մշակույթի ձևավորումն է: Այն

հաստատում է իրականության օբյեկտների հետ մարդու գեղագիտական հարաբերությունը, ձևավորում է նրա գեղագիտական զգացմունքները, ճաշակը, իդեալը, գեղեցիկը գնահատելու կարողությունը, ապահովում գեղագիտական ունակությունների, կարողությունների, հմտությունների և այլ որակների զարգացումը, ակտիվացնում, ընդլայնում և բավարարում է գեղագիտական պահանջմունքները, գեղեցիկը ընկալելու և ստեղծագործելու հնարավորությունները: Գեղագիտական դաստիարակությունը ներդաշնակ է դարձնում մարդուն, զարգացնում նրա ստեղծագործական ունակությունները: Գեղագիտական դաստիարակությունը իրականացնում է երկու հիմնական գործառույթ. այն ձևավորում է սովորողի արժեհամակարգի և արժեքային կողմնորոշման գեղագիտական բաղադրիչը և զարգացնում նրա գեղագիտական և ստեղծագործական ներուժը: Այն նաև մարդկային փոխհարաբերությունների կարգավորման միջոց է. մարդը միշտ ձգտում է դեպի գեղեցիկը: Այս տեսակետից դաստիարակության գեղագիտական և բարոյական բաղադրիչները մոտենում են իրար https://tert.nla.am/archive/ .

Բարոյական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատաքներում Սուխոմլինսկին գլխավորը համարում էր անձնավորության գաղափարական հիմքի՝ քաղաքացիական հայացքների, համոզմունքների, զգացմունքների, վարքի, արարքների, խոսքի ու գործի միասնության ձևավորումը:Բարոյական դաստիարակության մեջ, ըստ Սուխոմլինսկու՝ մեծ դեր են խաղում էթիկական զրույցները և էթիկական պատմությունները: Բայց միայն դրանք բավարար չեն, կարևոր է, որ խոսքը վերածվի գործի, աշխատանքի, արարքի, միայն այդ դեպքում է երեխան ձեռք բերում բարոյական փորձ և օրինակելի վարքագիծ:Վեհ գաղափարները դաստիարակչական տեսակետից նրանով են արժեքավոր, որ դրանց շնորհիվ ստեղծվում է կոլեկտիվի և անհատականի, հասարակականի ու անձնականի միասնություն: Այդ միասնությունը ընդհանրապես բարոյական դաստիարակության կարևոր պայմանն է: Բարոյական դաստիարակության վերջնարդյունքը Սուխոմլինսկին համարում էր անձնական բարոյական համոզմունքների ձևավորումը:

Ըստ նրա՝ դրանք բնութագրում են մարդու հոգևոր կերպարը, մտքի և արարքի, խոսքի և գործի միասնությունը վարքի մեջ: Բարոյական համոզմունքի մասին կարելի է խոսել այն ժամանակ, երբ ճշմարտության հասկացության իմացումը խոր կերպով արտացոլվում է մարդու անձնական հոգևոր աշխարհում, դառնում նրա անձնական հայացքը, արթնացնում խոր զգացմունք, միանում նրա կամքին և դրսևորվում նրա

գործունեության մեջ, վարքագծում, արարքներում՝ ուրիշ մարդկանց և իր իսկ նկատմամբ:

Մտավոր դաստիարակությունն ընդգրկում է գիտելիքների ձեռքբերում և գիտական աշխարհայացքի ձևավորում, իմացական և ստեղծագործական ընդունակությունների զարգացում, մտավոր աշխատանքի մշակույթի ձևավորում, հետաքրքրության և պահանջմունքի դաստիարակում մտավոր գործունեության, գիտական գիտելիքների անընդհատ հարստացման, դրանք կյանքում կիրառելու ընթացքում:

Այսպիսով «արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

1.2 Անձի արժեհամակարգի ձևավորման աշխարհայացքային նախադրյալները

«Աշխարհայացք» հասկացություն մարդու հայացքների և համոզմունքների համակարգ է, որը ձևավորվում է անհատական փորձի ընթացքում: Իր հայացքների և համոզմունքների համակարգին համապատասխան՝ մարդը որոնում է կյանքի առաջադրած ցանկացած հարցի պատասխանը: Մարդու բարոյականությունը, նրա բնապահպանական կուլտուրան, գեղագիտական իդեալները և այլն, այլ բան չէ, քան մարդու անձնական վերաբերմունքի դրսևորում շրջապատող իրականության նկատմամբ, այսինքն նրա աշխարհայացքը:

Ինչպե՞ս է ձևավորվում աշխարհայցքը.



Այսօր մենք հայտվել ենք պատմական իրողության այնպիսի խաչմերուկում, որտեղ միաձուլվում են մեր նախնիներից ժառանգած և սերունդներին շռայլորեն փոխանցված իրական արժեքները: Վերապրելով այս ամենը ՝ փաստում ենք այն ճշմարտությունը, որ այսօր կրթությունը պետք է դառնա մեր նախնիների արյան գնով ձեռքբերված, սրբությամբ պահպանված և մեծ հույսով, հավատով մեզ վստահված ազգային, մշակութային, հավատքի արժեքները: Չէ որ դրանով է պայմանավորված մեր ազգի ինքնությունն ու մեր ապագան: Անձի արժեքների համակարգը հիմնված է այն հասարակության գաղափարախոսության վրա, որին նա պատկանում է: Տարբեր գաղափարախոսությունների դեպքում առաջնությունը կարող է տրվել տարբեր արժեքների: Անհատական և սեռատարիքային տարբերություններին զուգահեռ կան նաև արժեքային կողմնորոշումների ընդհանուր բնութագրեր, որոնք բնորոշ են օնտոգենեզի որոշակի փուլերին: Արժեքային կողմնորոշումների փոփոխությունների գործընթացը, դրանց որակական վերակառուցումն առավել կերպով տեղի է ունենում երեխայի՝ օնտոգենեզի մի փուլից մյուսին անցնելու շրջանում: Հենց այդ ժամանակ ի հայտ եկող նորագոյացությունների հիման վրա են առաջանում երեխայի արժեքային կողմնորոշումների փոփոխության միտումները, որոնք հակասության մեջ են մտնում գոյություն ունեցող շարժառիթների և պահանջմունքների համակարգի հետ՝ կանխորոշելով դրանց որակական վերակառուցումը [Журавлева Н. А., Психология социальных изменений: ценностный подход. - М.: –зд-во «Институт психологии РАН», 2013. – 524 с.].

Կրթության սոցիալական ինստիտուտի միջոցով իրականանում է արժեքային մշակույթի փոխանցումը սերնդեսերունդ: Վ. Աֆանասևը գրում է, որ ընտանիքում և դպրոցում անձի ձևավորման գործընթացը իրականանում է նախևառաջ «տեղեկատվական ուղիով . անձին ուրիշների կողմից ստացվող համապատասխան տեղեկություն փոխանցելու միջոցով»: Մշակույթի, հասարակության արժեքների յուրացումը իրականանում է հասանելի տեղեկատվական միջոցների, մարդկանց հետ շփման միջոցով [Афанасев В. Г., Социальная информация и управление обществом. М.: Политиздат, 1975, 408 с.] .

Անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը ընդունված է դիտարկել որպես հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափություն: Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ: Այդ գործընթացում հատկապես կարևորվում է ներքնայնացման գործընթացը՝ որպես սոցիալական խմբի արժեքներից անցում դեպի անձնային արժեքները:

Արժեքային համակարգի ձևավորման գործում անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ մի շարք գործոններ, որոնց թվում են սոցիալական պայմանները, անձի սոցիալականացման բնութագրիչները, շարժառիթային ոլորտի առանձնահատկությունները և անձնային բնութագրիչները/ Ն. Զեյնալյան. « ԱՆՁԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԱՅԻՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ », հոդված, 2017 թ., 44-46 էջ/ :

Գլուխ 2 Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հասատություններում

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն

2.1 Դպրոցահասակների արժեհամակարգի ձևավորման ուղղիները և մեթոդները

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից» [Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 317 էջ:]:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական:

Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:

2.2Արժեհամակարգի ձևավորումը ավագ դպրոցահասակների շրջանում հայոց պատմություն առարկայի դասավանդման ընթացքում

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Իբրև հայոց պատմության ուսուցչուհի՝ սեփական փորձով կարող ենք հավաստել, որ աշակերտի արժեհամակարգը պետք է ձևավորել ներդաշնակության սկզբունքով, որում իր ուրույն տեղը պետք է ունենա հնարավորինս սերտ հաղորդակցումը ազգային մշակույթին և լեզվին՝ որպես մշակույթի մի տարատեսակի: Այս ամենը պետք է իրականացնել հայրենասիրական, գեղագիտական,բարոյական դաստիարակության ձևերը հիմք ընդունելով:

Ներկայացնում եմ ուսումնական նախագծի օրինակ, որը իրականացնել սովորողների մոտ կձևավորվի արժեհամակարգային մի շարք տարրեր:

Հայոց պատմությունն որպես հումանիտար գիտություն թույլ է տալիս անրադառնալ և խորանալ ազգային արժեհամակարգի ձևավորման և հայրենասիրական դաստիարակություն իրականացնելու գործում: Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն նրա անցած ուղին է, նրա կենսագրությունն ու հիշողությունը, դարերի ընթացքում նրա կերտած հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը: Պատմության ուսումնասիրումը հիմք է յուրաքանչյուր քաղաքացու, հասարակության և պետության ապագա գործունեության: Հայոց պատմության իմացության միջոցով է ձևավորվում ազգային ինքնագիտակցությունն ու մտածողությունը, պատասխանատու և սեփական տեսակետն ու դիրքորոշումը ունեցող, կշռադատված որոշումներ կայացնող, ազգային արժեհամակարգը կրող անձ ու քաղաքացի:

<<Յուրաքանչյուր հայի բնույթն է՝ սովորել, ուսումնասիրել, հարցնել, ենթադրել,

հնարել, բացահայտել, ստուգել, վերականգնել, պահպանել, ստեղծել և նվիրել>>:
Վիլյամ Սարոյան

Ուսումնական նախագիծ

Թեմա՝ Հայաստանի մշակութային արժեքները դրանց ճանաչումը և պահպանությունը

Համակարգող՝ Արմենուհի Խաչյան

Իրականացնող՝ 11-րդ պատմագիտական դասարան

Նախագծի խնդիրները՝

- Խորացնել գիտելիքները Հայոց պատմություն առարկայից
- Ձևավորել հետազոտական հմտություններ և կարողություններ
- Իրազեկել հասարակությանը հայրենիքի մշակութային արժեքների մասին, ընդգծել դրանց կարևորությունը երկրի զարգացման գործընթացում:

Նախագծի նպատակը.

- *Կրթական՝* ընդլայնել սովորողների պատմագիտական գիտելիքները: Սովորեցնել գնահատել հայրենիքի մշակութային արժեքները և պահպանել դրանք

- *Զարգացնող՝* աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացման համար միջավայրի ստեղծում:
- *Դաստիարակչական՝* սերմանել սեր դեպի հայրենիք, բնությունը: Ձևավորել հայրենասիրական, գեղագիտական, բարոյական, քաղաքացիա-իրավական և մտավոր դաստիարակության տարրեր:

Նախագծի փուլերը՝

Ուսումնասիրում և հետազոտություն

Հետազոտության օբյեկտներ՝

Գետահովիտի պատմամշակութային արժեքներ

Գեղհովիտ գյուղը փռված է Մարտունի գետի 2 ափին՝ Քռա և Դեմեր բարձրավանդակների միջև: Գեղարքունիքի մարզի Մարտունի տարածաշրջանի՝ ծովի մակերևույթից մոտ 2100 մ բարձրության վրա գտնվող Գեղհովիտն ունի հազարամյակների պատմություն: Գյուղի մեջ պահպանված են բազմաթիվ հուշարձաններ, ամրոցներ, եկեղեցիներ, հնավայրեր, ժայռապատկերներ և դամբարանադաշտեր:

Գեղարդի վանք և Ազատ գետի վերին հովիտ

Տեղակայվածությունը: *Կոտայքի մարզ*
Հիմնադրումը: 4-րդ դար

Գեղարդի վանքը մի հոյակերտ վայր է, որտեղ հայ նշանավոր ճարտարապետ Գալձագը ժայռը փորելով կերտել է երկու եկեղեցի: Այն գտնվում է Ազատ գետին հարակից ժայռերից մեկի լանջին: Համաձայն հայ մատենագրության մեջ պահպանված ավանդույթի՝ վանքի հիմնադրումը վերագրվում է Գրիգոր Լուսավորչին (4-րդ դար): Ըստ եկեղեցու ավանդույթի՝ այստեղ տարիներ շարունակ պահվել է այն նիզակը՝ գեղարդը, որով խոցվել է Քրիստոսը: Ահա թե ինչու վանքն ավելի ուշ ստացել է Գեղարդավանք անվանումը:

Հաղպատի և Սանահինի վանքեր

Տեղակայվածությունը: *Լոռու մարզ*
Հիմնադրումը: 10-րդ դար

Հաղպատի վանքը համարվում է Հայաստանի ամենամեծ և ամենակարևոր վանքերից մեկը: Բարձրադիր այս վանքը մի կողմից շրջապատված է Սուրբ Լույս և Տերունական լեռնագագաթներով, մյուս կողմից՝ Լոռվա բերդով և Սաղիձորի կիրճով՝ որով հոսում են Սաղիկ և Կայան գետերը:

976 թվականին հիմնադրված վանքն իրենից ներկայացնում է ճարտարապետական կառուցվածքների մի համալիր, որը բաղկացած է կրոնական և աշխարհիկ կառույցներից՝ շրջապատված աշտարակներով և ցանկապատներով:

Սանահինի վանական համալիրը տեղակայված է Դեբեդ գետի ձախ ափին՝ Սանահին գյուղում: Այն հիմնադրվել է Աշոտ 3-րդ Բագրատունու կողմից 966 թվականին: 10-րդ դարի վերջից այն դարձավ Կյուրիկյանների տոհմի վարչական կենտրոն և գերեզմանատուն: 10-11-րդ դարերում վանքը հանդիսանում էր նաև մշակութային կենտրոն. կառուցվել էին համալսարան և հարուստ գրադարան: 12-րդ դարավերջին համալիրը գտնվում էր Զաքարյանների տոհմի ենթակայության տակ:

Էջմիածնի Մայր տաճար և եկեղեցիներ (սբ. Հռիփսիմե, սբ. Գայանե, սբ. Շողակաթ) և Զվարթնոցի տաճարի հնավայր

Տեղակայվածությունը: Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ

Հիմնադրումը: 4-րդ դար

Աշխարհի հնագույն տաճարներից մեկը՝ Էջմիածնի Մայր տաճարը, կառուցվել է այն վայրում, ուր Հայոց առաջին պատրիարքի՝ ամենայն հայոց կաթողիկոս Գրիգոր Լուսավորչի երազում իջել է Քրիստոսը՝ Աստծո միածին որդին: Այն նաև համարվում է Հին Հայաստանում կառուցված առաջին տաճարը: Եկեղեցին կառուցվել է 301-303 թվականներին: ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում Մայր տաճարի հետ միասին ընդգրկված են նաև քաղաքում գտնվող Սուրբ Հռիփսիմե, Սուրբ Գայանե և Սուրբ Շողակաթ եկեղեցիները:

Զվարթնոցի տաճար

Տեղակայվածությունը: Արմավիրի մարզ
Հիմնադրումը: 7-րդ դար

Զվարթնոցի տաճարը համարվում է եզակի ճարտարապետական կառույց և ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում: Այստեղ գտնվել է հեթանոսական աաստվածներից Տիրի տաճարը: Հետագայում՝ 7-րդ

դարում, կառուցվել է Զվարթնոցի կամ Սուրբ Գրիգորի տաճարը: Ներկայումս պահպանված են հատակը, մասամբ պատերի ստորին հատվածները, հիմքը, արևի ժամացույցը, որմնանկարների և խճանկարների մնացորդները[https://yerevancard.com/am/news/111/] :

Առաջադրանքներ.

- Ուսումնասիրել տվյալ պատմամշակութային օբյեկտների պատմությունը, ընդգծել դրանց կարևորությունը
- Այցելել տվյալ մշակութային վայրեր, զրույցներ անցկացնել տեղաբնակների հետ, արդյունքում հավաքագրած տեղեկատվության հիման վրա գրել հոդվածներ :
- Ստեղծել քարոզչական հոլովակ «Հայաստանի պատմամշակութային արժեքները» խորհագրով և այն տարածել սոցիալական կայքերում, բարձրացնելով իրազեկվածության աստիճանը հատկապես դպրոցահասակների շրջանում, խոսել հայրենիքի մասին որպես բարձրագույն արժեք:

Արդյունքում.

- Նախագծի ընթացքում սովորողները իրենք են լինելու սովորեցնողի, հետազոտողի , նոր փաստեր արձանագրողի դերում, որի արդյունքում ձևավորվում է նրանց ինքնուրույնությունը, զարգանում է հետազոտական կարողությունները, մտավոր ունակությունները, արագ կողմնորոշվելու կարողությունները և այլն:
- Աշխատանքները իրականացնելիս սովորողների մոտ ձևավորվում է հայրենասիրական դաստիարակության տարրեր, բարոյական և հոգևոր արժեքներ, սովորողները յուրաքանչյուր մշակութային օբյեկտին ցուցաբերում են հուզաարժեքային մոտեցում, որի շնորհիվ ձևավորվում է նրանց ազգային արժեհամակագը և ընգծվում ազգային դիմագիծը:
- Զարգանում է սովորողների մեդիագրագիտությունը , սոցիալական կայքերում հոդվածներ գրելու, հոլովակներ տեղադրելու շնորհիվ, մեդիատեխնոլոգիաների կիրառմամաբ:

Եզրակացություն

- ✓ *Ուսումնասիրելով արժեհամակարգի ձևավորման ուղղիները և դրանց կապը դաստիարակության ձևերի միջև պարզ դարձավ,որ արժեքային համակարգի ձևավորումն ընթանում է դաստիարակության և կրթության ընթացքում սոցիալական փորձի յուրացման միջոցով: Անձնային արժեքները ձևավորվում են սոցիալականացման ամբողջ ընթացքում:*

- ✓ *Ուսումնական նախագծի արդյունքում սովորողների մոտ ձևավորվում է հայրենասիրական դաստիարակության տարրեր, բարոյական և հոգևոր արժեքներ, սովորողները յուրաքանչյուր մշակութային օբյեկտին ցուցաբերում են հուզաարժեքային մոտեցում, որի շնորհիվ ձևավորվում է նրանց ազգային արժեհամակագը և ընգծվում ազգային դիմագիծը:Զարգանում է սովորողների մեդիագրագիտությունը , սոցիալական կայքերում հոդվածներ գրելու, հոլովակներ տեղադրելու շնորհիվ, մեդիատեխնոլոգիաների կիրառմամաբ:*

- ✓ *Այսպիսով կրթության սոցիալական ինստիտուտի միջոցով է իրականանում արժեքային մշակույթի փոխանցումը սերնդեսերունդ: Ընտանիքում և դպրոցում անձի ձևավորման գործընթացը իրականանում է նախևառաջ «տեղեկատվական ուղիով . անձին ուրիշների կողմից ստացվող համապատասխան տեղեկություն փոխանցելու միջոցով»: Մշակույթի, հասարակության արժեքների յուրացումը իրականանում է հասանելի տեղեկատվական միջոցների, մարդկանց հետ շփման միջոցով:*

Գրականության ցանկ

1. Թանգամյան Տ. «ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ » ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ, 2017 թ.:
2. Ն. Ձեյնալյան. « ԱՆՁԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԱՅԻՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ », հոդված, 2017 թ., 44-46 էջ:
3. Ռուչկա՝ 1976, Անանև՝ 1996, Լեոնտև՝ 1998, Սուրինա՝ 1996:
4. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 317 էջ
5. Андреева Г. М., Психология социального познания. М.: АспектПресс, 2000, 288 с.
6. Афанасев В. Г., Социальная информация и управление обществом. М.: Политиздат, 1975, 408 с.
7. Журавлева Н. А., Психология социальных изменений: ценностный подход. - М.: –зд-во «Институт психологии РАН», 2013. – 524 с.
8. Леонтев Д. А., Развитие личностных ценностей в общественном контексте, Вестник Московского Университета. Сер. 14. Психология. 1997. №1. сс. 20-27
9. https://yerevancard.com/am/news/111
10. https://tert.nla.am/archive/
11. https://westernarmeniatv.com/